



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 09 >> << *հունվարի 6* >> 2020թ.

N *ՎՊ/ՕԴ-2020*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ՝

1. 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 6՝ <<Ջրարբիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Մեծամորի N1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Առատաշենի Գագիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ակնաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Թաիրովի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում և <<Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2017, 2018, 2019 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 22 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

 Недействительная подпись

X
VERIFIED OCSP 09.01.2020 12:02:33 GMT+4
Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

/ՄԱՐԶՊԵՏ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ